

ՆՈՒՐԻ  
(ԼՈՐԵՏԱ ՄՈՒՐԱԳՅԱՆ)

# ԹԱՔՆԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ



2017

ՀՏԴ 821.19-1 Մուրադյան  
ԳՄԴ 84 (5Հ)-5  
Մ 992

Լորենտա Մուրադյանի «Թաքնագրեր» ժողովածուն տպագրվում է որպես «Արարատ Մկրտումյան» ամենամյա մրցանակաբաշխությանը մասնակցած և գլխավոր մրցանակին արժանացած հեղինակի գիրք:

Շնորհակալություն գրքի հովանավոր  
**ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻՆ**

Մուրադյան Լորենտա  
Մ 992 Թաքնագրեր: Բանաստեղծություններ / Լ. Մուրադյան.-  
Եր.: Արմավ, 2017.- 96 էջ:

ՀՏԴ 821.19-1 Մուրադյան  
ԳՄԴ 84 (5Հ)-5

ISBN 978-9939-863-72-6

© Մուրադյան Լորենտա, 2017  
© «Արմավ», 2017

ԱՆԷ

## ԿԱՐՈՏՈՒՄ ԵՍ

Հե՛րն եմ անիծել կարոտ կոչվածի,  
Որ ոտքն է դնում կոկորդիդ վրա,  
Սեղմում է Էւքա՛ն, մինչև շնչահեղձ  
Մի բուռ օդ ես դու աղերսում նրան:

Տե՛ս՝ էդ գիշակեր սևավոր հսկան  
Ջլերն է հերթով պոկում ծնկներիդ,  
Պառավ հոգեգող ցնորքի նման  
Քարշ տալով տանում բեզարած հոգիդ:

Ու էդ դեղնավուն մակաբույժ փոշին  
Արյանդ հունով մազցում է վե՛ր,  
Մեխում է գանգո, պայթեցնում կրկին  
Քրքրված միտքդ՝ թմրած ու ավեր:

Այժմ անմարմին ճառագումն հրե  
Քմահաճ խաղով քեզ ծնկի բերել  
Եվ ականջիդ տակ հեգնանքով մի վեհ  
Շշնջում է, թե ԿԱՐՈՏՈՒՄ ԵՍ ԴԵՌ...

## ԱՆԷ

Մի՛ սահմանեք ինձ.  
 Ես անսահման եմ  
 Իմ էության մեջ,  
 Նաև անկյութ եմ  
 Նյութի եզերքում,  
 Անըմբռնելի  
 Ձեր տիեզերքում...  
 Ես անբարբառ եմ  
 Իմ խոհերի մեջ,  
 Անշահախնդիր՝  
 Իմ հույզերի մեջ,  
 Գուցե անգո եմ  
 Ձեր մտացածիկ  
 Գոյի ջրերում,  
 Գուցե և անձև՝  
 Անթի՛վ, անհամա՛ր,  
 Կտրած-կարկատած  
 Բանաձևերում,  
 Ձեր դոզմաներից  
 Ու կանոններից  
 Պարականոն եմ,  
 «Կա՛մ...կա՛մ» հերքող եմ,  
 «Ե՛վ...և՛» չփնտրող,  
 Ու անվե՛րջ, անվե՛րջ  
 Էությանց խորքում  
 Անտուն, անմարմին  
 Հավերժ թափառող...  
 Չասե՛ք, թե ով եմ...

## ԽՂՃԻ ԴԻՑԵՐԸ

Խղճի դիցերը երբեք չեն գալիս  
Սատանայի պես,  
Ձեռքդ չեն խայթում սենյակ սողոսկած  
Նենգ իժերի պես...  
Գալիս են մաքուր, անաղարտ հոգով  
Լույս հրեշտակի  
Եվ թևատարած ճախրում երկնքում  
Ճահճոտ մտքերի,  
Գալիս են որպես աչքերիդ նայող  
Երեխա անբիժ,  
Աչքերիդ հունով թափանցում հոգիդ,  
Սուկում տեսածից...  
Դիցերն երկնածին երբեք չեն դատում.  
Սխալ ես կարծել,  
Այլ քեզ են թողնում՝ սեփական դատիդ  
Դատավոր լինել,  
Նրանք գալիս են, որ քո գոյության  
Նվաստ շունչն զգաս,  
Եվ ոչ թե իրենց, այլ քո թույլների  
Ցավից մղկտաս...  
Խղճի դիցերը երբեք չեն գալիս  
Սատանայի պես,  
Նրանք բույն դրել, քո մեջ են ապրում,  
Դիցը հենց դո՛ւ ես...

## ԺԱՄԱՆԱԿ

Օ՛, դու ժամանակ՝ անեծք ու օրհնանք,  
 Վիժեցրո՛ւ կյանքիս ամեն մի պատրանք,  
 Ե՛վ իմ հուշերի կտակը ցավոտ,  
 Ե՛վ ճամփիս ընկեր՝ սովերներն աղոտ,  
 Ե՛վ ամորֆության շունչը հարատև,  
 Ե՛վ դրա ծիչը, և՛ ընթացքն անթև:  
 Համբարձի՛ր հոգին, որ դատարկ մեռավ,  
 Մեռավ ու մեխվեց ճամփեքին պառավ:  
 Օ՛, անժամանակ պարոն ժամանակ,  
 Արա՛ մի ընծա վաղաժամանակ.  
 Կան՛ ավազներով ջնջի՛ր ամեն ինչ,  
 Կան՛ էլ ինձ նետի՛ր պահը որոշիչ:  
 Հռիռա՛ անժես՝ գոյությանց դեմքին,  
 Հորիզոն ձգվող մտքերիս շեմքին,  
 Ներկան՝ մի ծվեն երեկվա հուշից,  
 Մինչ «վաղս» ձախրեմ կյանքիս վերհուշից:

## ԼՅԱ ՄԻՆՈՐ ՎԱԼՍ

Գուցե դու մի օր  
Ծերացած ձեռքս  
Դնես ափիդ մեջ  
Ու գրկես մեջքս  
Արդեն կռացած...  
Գուցե պտտվենք  
Մեր գունեղ կյանքի  
Կարևոր վախճ՝  
Ամենաերկար,  
Ամենասպասված...  
Գուցե թե անցնենք  
Մեր բոլոր դժվար  
Ու խենթ օրերի  
Արահետներով  
Ու գուցե ժպտանք՝  
Հեռվում տեսնելով  
Ապրած ու չապրած  
Կյանքի ամեն պահ,  
Ամեն ակնթարթ,  
Ամեն երազանք...  
Գուցե միասին  
Խոր հոգոց հանենք  
Դրանց հետքերով,  
Գուցե ափսոսանք,  
Գուցե կարոտենք...  
Իսկ երբ մատներով  
Զգույշ հետ տանես  
Դեմքիս վրայից  
Մազերս ձերմակ,  
Գուցե մենք զգվենք...  
Իսկ ես առաջվա



Սրտի թրթիռով  
 Ու երեկվա պես  
 Չդիմադրեն  
 Քո սեր աչքերին  
 Ու նուրբ համբուրեն  
 Հատիկ առ հատիկ  
 Քո՝ ժամանակի  
 Վրձնած շերտերը  
 Դրանց ծայրերին...  
 Իսկ հետո գուցե  
 Ինձ կրժքիդ սեղմես  
 Ու մեղմ շշջաս.  
 -Մենք էլ ծերացանք  
 Միասին, սե՛ր իմ...  
 Ու կհասկանանք  
 Մեր այս պատմության  
 Համփարաժակին,  
 Որ հենց սա էր մեր  
 Կյանքի երազը...  
 Գուցե այդ օրը  
 Պարենք միասին  
 Մեր կյանքի վերջին  
 Կամ էլ առաջին  
 Լյա միևնոր վախը...



Չասել, մնջել...  
Քան հետևել,  
Թե ինչպես է  
Հույզդ, խոսքի  
Հանդերձ հագած,  
Լուռ լղրվում  
Մուգ ապակուն  
Ու թափվում ցած...



Քո լուճ խոկումի  
Հայացքն հպանցիկ  
Ծանրացել է թաց  
Կոպերիս վրա,  
Ուզում եմ զննել  
Հատակն աչքերիդ  
Ու պեղել խորքից  
Գեթ մի պատուհան...

## ՀԱՐԱՋԱՏ ԴԱՀԻՃ

Իմ կամայական  
Լինելիության  
Դու ըմբոստ պայման,  
Բացասումներիս  
Շղթա բացասման,  
Որ փլուզում ես  
Օրենքներն համայն  
Անձիս գոյության  
Ու կերտում նոր բան  
Ամեն բջիջում  
Ճանաչողության...  
Տարերկրային  
Կատարյալ մի գիր,  
Մի ճակատագիր  
Դեռ չվերժանված,  
Բայց այնպե՛ս ձգող,  
Այնպե՛ս մագնիսված,  
Որ թվում է, թե  
Թաքնագրության  
Շղարշից այն կողմ  
Մի ողջ տիեզերք է  
Լողում անհմաց...  
Իմ ներկապնակ  
(Քմահած մի քիչ),  
Մի քիչ դավաճան,  
Երբեմն խամրած,  
Երբեմն կորած,  
Կորած անարդար,  
Որ կյանքը դառնա  
Խունացած թղթին  
Անհաշտ խզբզած

Մի ձեպանկար,  
Որ ապրեմ անգույն,  
Առանց հոգու ծիչ...  
ՀԱՐԱԶԱՆՑ ԴԱՀԻՃ...



Ես էսօր մեռա.  
Ես՝ իմ մահիճում,  
Դու երևի քո...

Ես էսօր կորա.  
Ես՝ իմ ճահիճում,  
Դու երևի քո...

Ես էսօր մեռա  
Մեռնելուց առաջ,  
Մեռնելուց ցավոտ...

Թե մահից հետո  
Ուրիշ մահ չկա,  
Իմ մահն է ԿԱՐՈ՛Տ...



Մեկը կուչ եկել դողում է ցավից  
 Սև չղջիկի պես,  
 Վազում պատերով, հևհև ծնկում  
 Ու լալի՛ս, լալի՛ս,  
 Մերթ ընկնում վերև՝ ձգողական դաշտև  
 Ուրացածի պես,  
 Ու բռռում ուժգին, փաթաթվում իրեն,  
 Անձրևով գալիս,  
 Մերթ սառչում անշունչ ու կանգնած ֆիլմի  
 Ժայռավենև ի տես,  
 Չոված աչքերով դրվագներ փնտրում,  
 Երգում գտնելիս,  
 Փնջում հուշերը, ցավով կապկպում,  
 Հեկեկում այնպե՛ս...  
 Թե ի՞նչ իմանա՛ս ինչով է կիզվում  
 Գիժը գժվելիս...

## ՄԵՂՐԱԲԵՐՔ

Բառը ցրվել է  
Տարածության մեջ  
Ու կախվել օդում  
Լուսնկայի պես...  
Ամեն մասնիկը՝  
Մի-մի վանակատ,  
Մի-մի ամոթխած  
Քողարկված ժպիտ,  
Մի-մի կայծ հոգու...  
Եվ թափառում եմ  
Գալակտիկայի  
Ափերին հյուսած  
Կաթանով լուսե  
Ու փորձում փնջել  
Կաթիլ առ կաթիլ  
Ատոմներն անթիվ,  
Կազմել ծաղկաբույլ  
Իմ հոգու բառի,  
Ինչպես հազարան  
Ծաղկանց նեկտարն է  
Մեղրաբերք սարքում  
Գծավոր մեղուն...  
Կամ էլ թե՛ ինչպես  
Խճանկարն է  
Դանդաղ հավաքվում  
Ու դառնում պատկեր...  
Իսկ թե ի՞նչ պատկեր  
Պիտի երևա  
Բյուրեղիկների  
Այս մաքուր փնջից,  
Մտածի՛ր ինքդ...



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԱՆԷ

Կարոտու՞մ ես .....	4
Անէ .....	5
Խղճի դիցերը .....	6
Ժամանակ .....	7
Լյա միևոր վալս .....	8
Չասե՛լ, մնջե՛լ... .....	10
Քո լո՛ւռ խոկումի .....	11
Հարազատ դահիճ .....	12
Ես Էսօր մեռա. ....	14
Մեկը կուչ եկել դողում է ցավից .....	15
Մեղրաբերք .....	16
Եվ նվագում էր խելագար ոգին աղեղով բարակ .....	18
Էսօր թարս էր .....	19
Եվ մենք հարբած .....	20
Ամբողջը գիտի .....	21
Եվ կման գոյությունները բոլոր .....	22
Թող հիմա հավեն .....	23
Էությունդ արևագոծ՝ նուրբ թելով .....	24
Լիլիթ .....	25
Կուգեն հասկանալ .....	26
...Այնպես է լինում .....	28
Ներհայեցում .....	29
Առաջին .....	30
Խանդ .....	31
Հոգուս լուսաթև .....	32
Այդ նույն արևն է .....	33
Ծովանկար .....	34

Արի լինենք . . . . .	35
Յասամանաբույր կաթիլներ . . . . .	36
Հիասթափության տաճարում . . . . .	37
Մոռացել են կորցնելը . . . . .	38
Մի թող . . . . .	39
Դո՛ւ ես մեղավոր . . . . .	40
Ար-է . . . . .	42
Ապրիր մեռնելիս . . . . .	43
Եվ դու հասկացար . . . . .	44
Ես պիտի Էսօր ծիածան հագնեմ . . . . .	46

## ԱՄԵՆԱ

Սիրտս անպ է քուլա-քուլա . . . . .	48
Ամենա . . . . .	49
Մշո Էրզրի սարերի պես, եփրատաբույր աչքերիդ . . . . .	50
Զմռան ափի մեջ . . . . .	51
-Մարա՛լ աղջիկ, խե՛նթ աղջիկ . . . . .	52
Հայոց աշխարհին . . . . .	53
Եփրատ . . . . .	54
Շաման . . . . .	55

## ԱՆՏԵՍԱԿ

Երբ մի տեսակ՝ անտեսակ . . . . .	58
Թողնում են քեզ քո աշխարհը . . . . .	59
Մի քիչ աղոթք . . . . .	60
Լռի՛ր, լռության անմարմին քրքիջ . . . . .	61
Տաղարան աղոտ . . . . .	62
Պատահում է . . . . .	63
Թանաք կաթեց հոգուս մեջ . . . . .	64
Դիմանկար . . . . .	65

## ՆԵՐՀԱԿ

Կեղծիքի ոգի . . . . .	68
Չիլեն՛, գոյություն չունենա՛լ . . . . .	69
Դու էլ կարծեցիր՝ չարացե՛լ եմ ես . . . . .	70
Ինքս չգիտեմ՝ որտեղից իջավ . . . . .	71
Պիտի . . . . .	72
Մի՞թե կուզեի . . . . .	73
Վանի՛ր սուտը. այն տանում է քեզ ինձնից . . . . .	74
Ապագայից խորշա՛ծ մարդ . . . . .	75
Թե խորանաս, կխենթանաս քո քայլերից . . . . .	76
Եվ կգա մի պահ . . . . .	78
Չի կարելի . . . . .	79
Անդինն ու կյանքը . . . . .	80
Ո՞վ ես լինելու . . . . .	81
Երբ ձեռքդ պարզած . . . . .	82
Իմը ինձ . . . . .	84
Քաշի՛ր, ձգի՛ր գազաններիդ կուռ շղթան . . . . .	85
Խոցի՛ր, բարեկա՛ն . . . . .	86
Ո՞վ ամենագոր դու Անգորություն . . . . .	87
Անցյալից մի ձայն քեզ ետ է կանչում . . . . .	88
Թո՛ւյլ տուր ինձ էսօր . . . . .	89
Ռեքվիեմ . . . . .	90
Սարսափով հիմա . . . . .	91
Ներեցեք ցայսօր չխոստովանած . . . . .	92

ՆՈՒՐԻ  
(ԼՈՐԵՏԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ)  
**ԹԱՔՆԱԳՐԵՐ**  
Բանաստեղծություններ

НУРИ  
(ЛОРЕТА МУРАДЯН)  
**ТАЙНОПИСЫ**  
Стихотворения

*Հրատարակչության տնօրեն՝ Արմինե Քոչարյան  
Խմբագիր՝ Անդրանիկ Կարապետյան  
Հրատ. խմբագիր՝ Արմեն Ավանեսյան  
Սրբագրիչ՝ Ռոզա Հովհաննիսյան  
Համակարգչային շարվածքը՝ Նունե Նիկողոսյանի*

*Չափսը՝ 60x84 1/16  
Թուղթը՝ օֆսետ 70գ/մ<sup>2</sup> 1.5 ծ.կ.  
Ծավալը՝ 6.0 տպ. մամուլ  
Տպարանակը՝ 250  
Տառատեսակը՝ Ghabuzian Mymekh  
Գինը պայմանագրային*



ИЗДАТЕЛЬСТВО АРМАВ

Ք. Երևան, Շիրազի 24 շ. 48 բն.  
հեռ.՝ 34-73-35  
Էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru

Г. Ереван, ул. Шираза 24 д. 48 кв.  
тел.՝ +374-10-34-73-35  
Email: armav-hrat@mail.ru

*Տպագրվել է «Նովել» տպագրատանը:*